Արմատական փոփոխութեան ենթարկուեց ռուսների հայկական քաղաքականութիւնը և ներքին կեանքում. հայերն այլևս բարեհաճ ուշադրութեան առարկայ չէին: Վերականգնուում էր նախապատերազմեան վերաբերումը: Խստացում էր դրաքննութիւնն ու ոստիկանական հսկողութիւնը քաղաքական կուսակցութիւնների և ազգային-բարեգործական կազմակերպութիւնների գործունէութեան վրա: Մասնաւորապէս, անբաղձալի տարր էին դառնում Թիւրքահայ գաղթականները և կամաւորական խմբերից հեռացած զինուորները: Ոստիկանութիւնը նրանց դէմ կիրառում էր խիստ միջոցներ — այլևս պէտք չունէր նրանց:

Եւ, հասկանալի է, հայ ժողովրդին համակում էր դառն հիասթափութիւնն ու վիշտը: Ի՞նչ էր սպասում, ինչ դուրս եկաւ: Թիւրքահայաստանի ինքնավարութեան փոխարէն՝ ահա ռուս բանակի կողմից դրաւած ու ռուսացման ենթակայ ամայի հողեր: Թիւրքահայ գիւղերն ու քաղաքները՝ աւերակ: Ժողովուրդը կա՛մ ոչնչացուած, կա՛մ տարագիր ու բնաջնջման ենթակայ և կամ — աւելի քան 300,000 հոգի — գաղթական վիճակում՝ ապաստանած Անդրկովկաս: «Մեծ դաշնակիցները» Հայաստանը բաժանել էին իրենց միջև, իբրեւ պատերազմական աւար: Հայերին վերանձնօրէն, չնորհւում էր...

«Եկեղեցական ինքնուրոյնութիւն»: Փա՛ռք «մեծ դաշնակիցներին»...

Միեւնոյն դառն ապրումներն ունէր և գաղութահայութիւնը, որ նոյնպէս խանդավառուած էր պատերազմից ստացուելիք բարիքներով: Ամերիկայի և Բալկանների հայերը լայն մասնակցութիւն էին բերել կամաւորական շարժման՝ դրամով ու մարդկային ուժերով և սպասում էին, որ, իբրև հետևանք հայերի մատուցած ծառայութեանց, Հայաստանին կը տրուի ինքնավարութիւն:

Արտասահմանի հայութեան իղձերի թարգմանն և քաղաքական գործունէութեան կենտրոն շարունակում էր մնալ Պօղոս Նուպարի պատուիրակութիւնը, Փարիզում, որ գործում էր Ազգային Պատուիրակութեան անունով: Նա ներկայացնում էր հայկական դատը պետութիւնների առջեւ և յենուած Ամենայն Հայոց Կաթուղիկոսից ստացած լիազօրութեան և համահայկական վստահութեան վրա՝ գործում էր ի նպաստ Հայաստանի ինքնավարութեան: Ինչպէս Ազգ. Բիւրօն Կովկասում, Ազգ. Պատուիրակութիւնն եւս արտասահմանում մեծ պետութիւնների պետական գործիչներից ու կառավարութիւններից ստանում էր խոստումներ ու հաւաստիացումներ, որ հայկական բաղձանքները լիովին կը դոհացուեն դաշնակիցների յաղթութիւնից յետոյ:

Այս հաւաստիացումների հիման վրա էր, որ Ազգ. Պատուիրակութիւնը նախաձեռնեց — Կովկասեան կամաւորական շարժման հաշւեյարդարից յետոյ — հայկական լեգէոնի կազմակերպութեան դաշնակիցների արևելեան բանակում: Հայկական լեգէոնը, իր հեղինակների գաղափարով, պէտք է ապագային կազմէր ինքնավար կամ անկախ Հայաստանի բանակի կորիզը: Եւ ինչպէս կամաւորական խմբերը Կովկասում, հայկական լեգէոնն եւս Պաղեստինի ճակատի վրա և ապա Կիլիկիայում երեւան բերեց մարտական ոգու հերոսական արտայայտութիւններ, մասնակցեց մեծ ճակատամարտների, կատարեց պատասխանատու դերեր, չչափելի կերպով նպաստեց դաշնակից